

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե

**9-10**-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

## 3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ամեն քայլում մեկ տառ փոխելով՝ «բթություն»-ից ստացել են «ծոություն».

բթություն - մթություն - լիություն - լռություն - ծոություն

Ո՞ր բառը պետք է լինի մեղվիկի փոխարեն:

- Ա. միություն      Բ. խություն      Գ. խտություն  
Դ. խենթություն      Ե. հնություն

2. Նշված բառերից որո՞վ կարելի է ստանալ նոր բառ՝ վանկերի տեղերը փոխելով:

- Ա. մկրատ      Բ. քարշակ      Գ. այծքաղ      Դ. ափսե      Ե. քարկապ

3. Ո՞ր տարբերակում սխալ չկա:

- Ա. խոսել - խոսացնել      Բ. գծվել - գծվացնել      Գ. մգանալ - մգացնել  
Դ. վախենալ - վախացնել      Ե. քնել - քնացնել

4. Պատասխանի տարբերակներում բերված բառերը մեկ տառով «պոչատելիս» ո՞րը կմնա անսասան:

- Ա. ավանդատուն      Բ. հացատուն      Գ. գրավատուն  
Դ. առանձնատուն      Ե. դեղատուն

5. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարելուկով:

- Ա. Կշեռքով մեկ ոսկի արծենալ:      Բ. Ծանր ու թեթև անել:  
Գ. Նետը քարին առնել:      Դ. Թեթև աչքով նայել:  
Ե. Մեծ ու փոքր չճանաչել:



6. Ղ տառն օգտագործելով՝ ո՞ր ձայնավորի օգնությամբ է հնարավոր կազմել ջրին հատուկ վեցտառանի բառաձև:

- Ա. ա      Բ. ե      Գ. ի      Դ. ո      Ե. ու

7. Գտի՛ր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

Ա. 62405	Բ. 81074	Գ. 58052	Դ. 96015	Ե. 65403	+	ՀԱՅԵՐ
+	+	+	+	+		ՀԱՅԵՐ
<u>62405</u>	<u>81074</u>	<u>58052</u>	<u>96015</u>	<u>65403</u>		ԱՇԽԱՐՀ
124810	162148	116104	192030	130806		

8. Բերված արտահայտություններից չորսին հատուկ է շատ հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր արտահայտությունն այդ օրինաչափությանը չի ենթարկվում:

- Ա. թարս ու շիտակ      Բ. ախ ու վախ      Գ. խենթ ու խելառ  
Դ. բան ու գործ      Ե. դեղ ու դարման

9. Պատասխանի տարբերակներում բերված խառնագրերը մեկնելուց հետո գտի՛ր ավելորդ բառը:

- Ա. սագուն      Բ. գիրեչ      Գ. նիգրս      Դ. շղաու      Ե. ածիտերշ

10. Մեղրից անուշ է,  
Նուշից էլ համով.

Ման է գալիս գիշերով:  
Շուկայում չի վաճառվում,  
Վաճառական չի բերում,  
Ինքն իր ոտքով տուն է մտնում: (ժողովրդական հանելուկ)

- Ա. թուզ      Բ. լուսին      Գ. երևակայություն      Դ. քուն      Ե. խելք

## 4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. *Խելքը, խամաճիկ, խորթ, խորխտ, խայտաճամուկ, խաբուսիկ, խնդուն* բառերը, բացի մեկից, նույն տան բնակիչներ են: Ո՞րն է օտար:

- Ա. խայտաճամուկ      Բ. խամաճիկ      Գ. խորխտ      Դ. խաբուսիկ      Ե. խնդուն

12. Ի՞նչ տառակապակցություն պետք է գրել մեղվիկի փոխարեն.

ՌՃԺՄ, ՄՄԻԲ, ՎՅԼԳ, ՏՆԽՂ

- Ա. ՌՏԾԵ      Բ. ԸՇԿԳ      Գ. ՑՈԿԶ      Դ. ԸՇԾԵ      Ե. ՔՁՂԹ

13. Ո՞ր նախադասությունն է զերծ մնացել մակարոյծ բառերից:

- Ա. Նա մեր դպրոցի ամենից լավագույն աշակերտներից մեկն է:  
Բ. Հարցը կայանում է նրանում, որ ամեն ինչ այդքան հեշտ չի տրվում:  
Գ. Տնօրենը հավանաբար իր մոտ է, կարող էք մոտենալ նրան:  
Դ. Ճանապարհի կեսից հետ վերադառնալու կարիք չկա:  
Ե. Այս ամենից հետո նրան հաջողվեց գրագրի պաշտոն ստանալ:

14. Մի քայլ արեց և դարձավ նյարդ: Ինչպե՞ս:

- Ա. Անպը հանդարտ հեռացավ:      Բ. Վարդը մի տառ փոխեց:  
Գ. Փղի գլխին նստեց սարդ:      Դ. Փիղը մի տառ փոխեց:      Ե. Մուկը թաքուն ծկեց:

15. Տրված բառերից չորսն ունեն հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր բառն այդ օրինաչափությանը չի ենթարկվում:

- Ա. ածուխ      Բ. ամառ      Գ. վարդ      Դ. սանձ      Ե. վերք

16. Ո՞ր գործողությունը նշված չէ Եղիշե Չարենցի հետևյալ տողերում.

*Աշունը դեղնաթուխ նստել է դռանը,  
Մրսած ու կծկված՝ դողում է, վայում է,  
Երկինքը թխպակալ կարծես մի բերան է,  
Ուզում է կլանել կանաչը, գարունը:*

- Ա. վայելել      Բ. սարսռալ      Գ. տեղավորվել      Դ. կուչ գալ      Ե. կուլ տալ

17. **Չարոս** բառում թաքնվել են **կար, ար, արոս** բառերը: Առավելագույնը քանի՞ բառ է նույն կերպ թաքնվել **բարձրավանդակ** բառում (բացառել հատուկ անունները):

Ա. 7      Բ. 8      Գ. 9      Դ. 10      Ե. 11

18. Բառերից մեկը չի ենթարկվում ինչ-որ օրինաչափության: Ո՞ր բառն է դա:

Ա. կոճակ    Բ. կողով    Գ. տակառ    Դ. փողոց    Ե. բացիկ

19. ՔՈՐ(2), ԿԵՐ(1), ՔԱՂ(2) բառաշարքի օգնությամբ Սարգիսը բառ է մտապահել: Փակագծերի թվերը ցույց են տալիս, թե այդ բառի և բառաշարքի տվյալ բառի մեջ քանի ընդհանուր տառ կա, ընդ որում՝ նույն դիրքերում: Սարգիսի մտապահած բառն է՝

Ա. քող    Բ. քար    Գ. կար    Դ. քերան    Ե. քաղաք

20. Տառերի թվային արժեքներով գտեք, թե որ նախադասությունն է **220 6451 401 8698 720 4001** թվերի միջոցով գաղտնագրված:

- Ա. Մնա՛, գարուն կգա, ամառ կգա ազատ:
- Բ. Մի՛ գնա, նա շատ շուտով կգա:
- Գ. Մի՛ ցնծա, նա փողը չի տա:
- Դ. Գնա՛, մի՛ մնա այս օտար հողում:
- Ե. Մի ցնցուղ ջուր թող քեզ տա:

### 5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Պատասխանի ո՞ր տարբերակում են իրար համապատասխանում հայկական առածների սկիզբն ու ավարտը:

- |                                  |                         |
|----------------------------------|-------------------------|
| 1. Ամռան որ պտակես հովեր,        | ա. կընկնի աղբի կողովը:  |
| 2. Երկաթի փուխն է հարցնում,      | բ. Բաղդադ կհասնեն:      |
| 3. Ինքն իրեն գովողը              | գ. անունը դրին Մարիամ:  |
| 4. Հարցնելով, հարցնելով՝         | դ. ձմռան կսատկեն կովեր: |
| 5. Օխտը վարդապետ մի տղա կնքեցին, | ե. մի ասեղ է առնելու:   |

Ա. 1-ա, 2-դ, 3-գ, 4-դ, 5-բ      Բ. 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-բ      Գ. 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-գ  
Դ. 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ, 5-ա      Ե. 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ, 5-բ

22. Նարեն կազմում է նախադասություն և դրա բառերը գրում առանց միջակայքերի: Հետո նա երեք տառը մեկ բաժանում է գրվածը, մասերը խառնում իրար ու ստանում հետևյալը. **ՋՄԱ ԿՆՈ ԻՏԱ ՋԵՐ ԿԵՆ ԸՄՊ**: Ի՞նչ նախադասություն էր կազմել Նարեն:

- Ա. Կարենը սպիտակ սինի ունի:      Բ. Ջերմ արտերը սեզ կտան:
- Գ. Սպի կա կինտոյի ձակատին:      Դ. Կնոջ մազերը սպիտակ են:
- Ե. Կնոջը կինտոն տարավ սար:

23. Ամենաշատը քանի՞ *ր* և քանի՞ *ռ* կտեղավորվեն *վաօվրուն, գաթնել, գաղարել, գաօվառ, աթուծ, մօնչուն, լպծուն, կօկոռ, աօագիլ, համաօել, կօունկ, փօփրել, գռծ, գանգուօ, հծճվանք* բառաշարքի բառերում՝ *օ*-ի փոխարեն:

Ա. 12 ր և 5 ռ    Բ. 11 ր և 5 ռ    Գ. 9 ր և 7 ռ    Դ. 8 ր և 7 ռ    Ե. 10 ր և 7 ռ

24. **ԲՈՆԻՐ, ՈՏՔԵՐԸ, ՉԹՈՂՆԵՄ** բառաշարքի բոլոր բառերով և պատասխանի տարբերակներում տրված բառերից որով են կազմվում իմաստով իրարից տարբեր

առնվազն երկու նախադասություն: Բառերի տեղերը կարելի է փոխել, վերջավորությունները՝ ոչ:

Ա. վազեն    Բ. քայլեն    Գ. քերծեն    Դ. կորչեն    Ե. քամեն

25. **բ, հ, ն, շ, խ, ջ, ճ** բաղաձայնները և նույն ձայնավորն օգտագործելով՝ կարելի է ստանալ բառեր: Քանի՞ տառանի է ստացված հնարավոր ամենաերկար բառը:

Ա. ինը    Բ. տասը    Գ. տասնմեկ    Դ. տասներկու    Ե. տասներեք

26. - **այինն ու – ականը** նոր «շունչ հաղորդեցին» *տուն, շարք, քաղաք, ցեղ, ազգ, լեռ* բառերին: Նրանցից քանի՞ սը սկսեց շնչել:

Ա. 2-ը    Բ. 3-ը    Գ. 4-ը    Դ. ոչ մեկը    Ե. բոլորը

27. ՄԵՆ, ՆՈՒ, ՅՈ, ՁԱ ընտանիքների անդամները հերթ էին կանգնել **բարձրաձայն, փափուշտ, աբողջ, ըպանակ, դուրըբունելի, հանդերանք, ճափա, աթիծ, հապատրաստից, որաքարե, սուսաբար, ափույթ** շարքում աստղանիշերի փոխարեն իրենց տեղերը զբաղեցնելու համար (ՁԱ ընտանիքի անդամներն են **ճ** տառերը): Ծարքը լրացնելուց հետո պատասխանիր, թե տարբերակներում բերված որ պնդումն է ճիշտ:

- Ա. Ընտանիքներից մեկը շարքում նոր անդամ չունեցավ:
- Բ. ՄԵՆ ընտանիքի նոր անդամների թիվը եռակի մեծ է ՁԱ ընտանիքի նոր անդամների թվից:
- Գ. ՅՈ և ՆՈՒ ընտանիքների նոր անդամների թիվը հավասար է:
- Դ. ՆՈՒ ընտանիքի նոր անդամների թիվը կրկնակի ավելի է շարքում այդ ընտանիքի՝ նախկինում ունեցած անդամների թվից:
- Ե. Բոլոր տարբերակները ճիշտ են:

28. Բառերի ո՞ր եռյակը քառակուսու մեջ լրացնելիս քառակուսու տողերով և սյուներով՝ վերևից ներքև, ներքևից վերև, ձախից աջ, աջից ձախ, կկարդանք բառեր:


Ա. արկ, բակ, սաս    Բ. աչք, պոչ, սպա    Գ. բակ, կես, առու  
Դ. իգա, թառ, քիվ    Ե. աբա, սալ, լակ

29. **Եզրագիծ, ձնթել, արբա, նշագիծ, ալիք, փքվել, գղալ** բառերը, բացի մեկից, ունեն շատ հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր բառը այդ օրինաչափությանը չի ենթարկվում:

Ա. ձնթել    Բ. եզրագիծ    Գ. ալիք    Դ. փքվել    Ե. գղալ

30. **Հատ, սար, դատ, կուտ, մեկ, մակ** բառերը բառամիջում մեկ տառի հավելումով նոր բառ են դառնում: Նմանատիպ հնարքով առավելագույնը քանի՞ նոր բառ կստանանք՝ «շ» տառի օգնությամբ:

Ա. երկու    Բ. երեք    Գ. չորս    Դ. հինգ    Ե. վեց